

Կաթնառատ

Մակերես՝ 42.52կմ²

Բնակչություն՝ 1028

Տնային տնտեսությունների թիվը՝ 294: Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 68 կմ հեռավորության վրա:

Գյուղը հիմնադրվել է 1897 թվականին շվեդացի ֆերմեր Գոդլեբ Գրաֆի կողմից, որը զբաղվել է անասնապահությամբ: Հետագայում՝ 1923թվականին գյուղը վերակազմավորվել և դարձել է ԽՍՀՄ առաջին սովխոզներից մեկը (Մոսկվայի ենթակայության) և շվեդ ֆերմերի ստեղծած բազայի վրա հիմնվել է Հայաստանում միակ «կոլկոսայան գորշ» ցեղի խոշոր եղջերավոր անասունների տոհմային անասնաբուծական սովետական տնտեսությունը:

Բարձրությունը ծովի մակարդակից 1540 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 3759,7 հա, որից՝ 491,7 հա վարելահող, 775,2 հա խոտհարք, 1994,3 հա արոտ: Գյուղի մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Չբաղվում են նաև մեղվաբուծությամբ:

Համայնքում կա կաթի փոշու արտադրման գործարան 25 տ/օր հզորությամբ, պանրի արտադրամաս:

Համայնքն ունի դպրոց, մշակույթի տուն,բուժկետ, կապի հանգույց:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցի կառուցումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի և մանկապարտեզի շենքի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: